№ 97 ՅՈՒՆԻՍԻ 15 (27) 1878 ՅՈՒՆԻՍԻ 15 (27) № 97

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի նահանգի ուսումնարանները։—Ներքին տեսութիւն։ Ժողովրդին կրթութիւն է հարկաւոր։ Նամակ Նուխուց։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Արևելեան հարցը և Ֆրանսիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԸ

Այս օրերս ստացանք Թիֆլիսի նահանգի ժողովրդական ուսումնարանների դիրեկտորի հաշիւը, 1877 թուի (Отчетъ директора народныхъ училищъ Тифлисской губерніи, за 1877 годъ)։

Ինչպէս յայտնի է այդ հաշիւի մէջ մտնում են միայն արքունի ժողովրդական, մասնաւոր և զանազան դաւանութիւնների եկեղեցական ուսումնարանները երկու սեռի երեխաների, իսկ միջնակարգ թէ արքունի և թէ հոգևոր դպրոցները և նոյնպէս օրիորդաց միջնակարգ դպրոցները չեն ենթարկվում ժողովրդական ուսումնարանների դիրեկտորի հրամանատարութեանը։

Հաշուից երևում է որ դիրեկտորի իրաւասութեանը ենթարկված Թիֆլիսեան նահանգի բոլոր դպրոցներում մինչև յունվարի 1-ը 1878 թուի ուսանում էին ընդամենը 8776 երեխաներ երկու սեռի, որոնցից արական սեռի 6442 հոգի, իսկ իգական 2334 հոգի։

Ազգութիւնների վրա բաժանելով՝ ռուսները 1089 էին, վրացիներ 1999 հայեր 4455, ինգիլօյներ 3, մինգրէլներ 4, աբխազներ 5, թուշեր 38, օսեր 3, լեզգիներ 23, յոյներ 154, լեհացիներ 40, ֆրանսիացիներ 9, գերմանացիներ 881, իտալացիներ 8, թուրքեր 38 և վերջապէս հրէաներ 23 հոգի։

Ուրեմն բացարձակ կերպով ամենից շատ հայեր են սովորում, թէև հաշուից երևում է որ այս տարի ուսում առնող հայ մանուկների թիւը համեմատելով անցեալ տարվայ հետ փոքր ինչ պակասել է։

Թէ հայ-լուսաւորչական և թէ հայ-կաթոլիկ ուսումնարանները բաժանվում են երկու տեսակի վրա՝ եկեղեցական ուսումնարանների, որտեղ բացի մայրենի լեզուից և կրօնից ուսուցանում են զանազան տարրական առարկաներ և ամեն տեղ ուսանդում են ռուսաց լեզու, որպէս առարկայ, և երկրորդ՝ սկզբնական, կամ գիմնազիական ուսումնարանների, որտեղ միմիայն կարդալ գրել և աղօթքներ են սովորեցնում մայրենի լեզուով։

Առաջին տեսակին պատկանում են հետևեալ հայ-լուսաւորչական դպրոցները Թիֆլիսի նահանգում, որոնք Թիֆլիսում թուով 14 են, Ախալցխայում, 4, Թէլաւում 2, Սղնաղում 2, Գօրում 2, Ախալքալաքում 2, Շուլավերում 1, Ղալաղ-Օղլում 1 և Սանահին վանքի մօտ 1 հատ։

Այդպիսով ժողովրդական լուսաւորութեան համար Թիֆլիսի նահանգում աշխատում են հետևեալ գործիչները՝ տէրութիւնը, բարեգործական ընկերութիւնները, գիւղական հասարակութիւնները, զանազան դաւանութիւնների եկեղեցիները և վերջապէս մասնաւոր ձեռնարկութիւնները։

Տէրութիւնը ծախսում է Թիֆլիսի նահանգի տարրական ուսման վրա տարեկան 50,227 ռուբլ, չը հաշուելով Ախալցխայի և Սոցխէնիսի արքունի ուսումնարանները։

Այս երկու սեռի մանուկները, բացի իրանց եկեղեցական ուսումնարաններից ցրված են ամեն ձևի և դաւանութեան ուսումնարանների մէջ։ Միայն «Ազգապահպանութիւնը վերականգնեցնող» ընկերութեան և ռուսադաւան եկեղեցական ուսումնարաններում հայ մանուկներ չը կան։

Հաշուից երևում է որ վրացիներից և հայ-կաթոլիկներից ոչ մի մանուկ չէ ուսանում հայ-լուսաւորչական դպրոցներում։

Ժողովրդական դպրոցների դիրեկտորը, երեխաներին դաւանութիւնների բաժանելով, մեր կարծիքով, նոյն սխալ է անում, ինչ որ անում են մեր բոլոր պաշտօնական անձինք՝ նա գտնում է բաւական մեծ թուով կաթոլիկ վրացիներին Ախալցխայի վիճակի գիւղերում, այն ինչ մեզ յայտնի է որ հայերը ընդունելով կաթոլիկութիւնը, իրանց վրացի են ասում։

Մենք մի բան նոյնպէս չենք հասկանում։ Մալականների գիւղերի ուսումնարաններում ուսում առնող մանուկներին հաշիւը մի կողմից դասաւորում է նրանց ազգութեան կողմից ռուսների մէջ (որ ուղիղ է), բայց ուրիշ կողմից չէ դասաւորում նրանց աղանդաւորների բաժնում, այլ ուղղափառների բաժնում։

Առհասարակ պ. Սորէլէցկու հաշիւը շատ դեղեցիկ, շատ հետաքրքիր և ուսանելի աշխատանք է։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՍԱՐԱԿ ԴԱՍԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ Է ՀԱՐԿԱՒՈՐ

Հասարակ ժողովրդին ևս կրթութիւն է հարկաւոր. այս կէտի վրա կարծեմ քանի մի անգամ ուշադրութիւն է դարձրած Թիֆլիսի լուսաւոր դասը։ Դեռ քանի մի ամիս առաջ ուրախութեամբ կարդացինք պատուական «Մշակ» լրագրի համարներում թէ՝ կիրակի օրեր պէտք է դասախօսութիւն լինի հասարակ դասի համար. մենք յուսով էինք որ այս նպատակը, որ ոչինչ արգելքների կարօտ չէր, շուտով իրագործված կը տեսնէինք, մանաւանդ որ շատերը խոստանում էին ձրիապէս դասախօսութիւն անել. բայց անցան օրեր, անցան ամիսներ, հարցը՝ մնաց հարց, կինտոները՝ կինտօ, տգէտները՝ տգէտ... լաւ չէ։

Հասարակ ժողովուրդը թէև չէ զգում ինչ օգուտներ կարող է ունենալ այդ դասախօսութիւններից, այնու ամենայնիւ նա պատրաստ է ուրախութեամբ լսել և մինչև անգամ իր չքաւոր գրպանից նուիրատուութիւն ևս գործել. իսկ երբ աչքի առաջ կը տեսնէ իր օգուտները, այնուհետև ինքը կարող է աշխատել և մտածել իր համար։ Ես զարմանում եմ, ինչպէս հետաքրքրվում են այդ խեղճ արարածները, երբ պատմում ես դրանց մի հասարակ բան. նոքա բերանը բացած պատրաստ են քեզ լսել ոչ թէ միայն երեք և չորս ժամ, այլ մինչև երեկոյ։ Փորձը հաստատում է ասածս։

Ամսի 11-ին, կիրակի առաւօտ, ես կանգնած էի Եարմարկում. հետաքրքրվելի եղաւ ինձ իմանալ թէ ինչու ամբոխը՝ որ բաղկացած էր մշակ, կինտօ, թուլուղչի և այլ այսպիսի անձինքներից վազում էին դէպի մի կողմ. հետևելով սոցա մտայ մի քարվանսարայ և բարձրանալով սանդուխների վրա, զարմանքս աւելի եղաւ, երբ բազմութիւնը ծովացած տեսայ ես այնտեղ։ Ամեն բան հանգարտ էր, կարծես թէ մարդ չը լիներ այդտեղ. որը նստած, որը կանգնած, որը հեռուից վիզը փոքր ինչ առաջ ձգած, ականջները կախած, օձը խայթէր, դարձեալ անշարժ, անթարթափ աչքերը դէպի մի կողմ ուղղած նայում էր, նայում էր անյագ ու անծայուտ. միայն մի խուլ ձայն և տնկտնկոտ էր լսվում այս ամբոխի միջից՝ ինչպէս մի վիրապից. ահա այս ձայնն էր, որ հետաքրքրում էր մեր ամբոխը։

Այս մի աշուղ էր, սազը ձեռին բռնած. ես այդ բօպէին Գողթնայ քնարերգուները երևակայեցի և աւելի ուշադրութեամբ սկսեցի լսել։ բայց ափսոս որ խօսքը Թուրքերէն լինելով ես միաձայն կցկտուր մաքեր էի հասկանում։ Զարմանքդ կրկնապատկվում է, եթէ այդ միջոցին մի հայացք ես դարձնում այդ հանդիսականների վրա. բոլորի դէմքը գոհ էր. իսկ եթէ աշուղի խօսքը կարվում էր, որ միայն փոքր ինչ հանդստանալու համար էր լինում, թէ ի՞նչ խրբուռոց, թէ ի՞նչ դատողութիւններ, թէ ի՞նչ ձայներ և ուրախական ծիծաղներ էին բարձրանում, չեմ կարող պատմել։ որը գովում էր աշուղի ձայնը, որը նրա պատմածները, որը ընկերից հարցնում էր որ և իցէ մի մոռացած բան, որը արագ վազում էր մի ղալեան բերել տալու և ծխում էր, ծխում էր քթից մուխ հանելով. ով գիտէ, մի և նոյն ժամանակ ինչ խոր մտքերի մէջ ընկղմվում։ Բայց ահա դարձեալ լսվեցաւ աշուղի ձայնը և նոյն բօպէի մէջ կարծես ամեն ինչ չքացաւ. այս անգամ նա խնդրում էր վարձատրութիւն, ասի, դու տես, թէ ինչպէս այս խեղճ ժողովուրդը վառված իր ջրի կոպէկները թափում էր այտուղ և ի՞նչքան զուարթ, ինչքան առատ, իրանք, իրանք էին խնդրում իրանց ընկերներից, անծանօթ անձինքներից, որ չը զլկեն աշուղին. «տուեցէք, սուրբ Կարապետի օրհնանքը ձեզ վրա լինի», լսվում էր մի բարձր ձայն, ճի՞ սուրբ Մարիամ Աստուածածին. և կարծես, այս բառերը ոգևորում էին սրանց։ Հինգ բօպէից յետոյ աշուղի առաջ փռված ալլուրի վրա տեսնվում էր մի կոյտ սև փողերի, բայց դեռ նուիրում էին.... նուիրատուութիւնը շարունակվում էր. այս անգամ աշուղը աւելի սիրտ առած, սազը թափահարեց, գլխքը հաւաքեց և դարձեալ աւելի պարզ, աւելի բարձր ու զուարթ իր պատմութեան թելը սկսեց. ձայները լռեցին, տիրեց հանդարտութիւն. միայն երբեմն երբեմն լսվում էին կոպէկների ձայներ, որոնք թռչտում էին այս և այն կողմերից աշուղի առաջը. պատմութիւնը շարունակվեց մինչև ժամի երկուսը, բայց դեռ ամբոխը լսում էր... տեսնելով որ վերջ չը կայ, թողեցի, բայց թէ երբ և ինչպէս վերջացաւ, ափսոսում եմ որ չը կարողացայ իմանալ։

Այս բոլորը աչքի առաջ ունենալով՝ ես ցաւում եմ, որ մեր խեղճ հասարակ դասը զուրկ է մնում օգտուէ դասախօսութիւններից և ոչ ոք չէ մտածում նրանց վրա։ Իսկ թէ հասարակ ժողովրդի զարգանալը ինչ զարկ կը տար Թիֆլիսին, այս բացայայտ է։

Մ. Ղալաբէգեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

9 յունիսի

Նախ քան գրել Նուխի քաղաքից նամակներ կամ լուրեր, ես կը կամենայի փոքր ի չատէ ծանօթացնել ընթերցողին այս քաղաքի

հետ։ Նուխի քաղաքն գտնվում է Գանձակի նահանգում և Թիֆլիսից 250 վերստաչափ հեռաւորութեամբ։ Այժմ նրա մէջի բնակիչների թիւը հասնում է մինչև 30 000-ի։ Նրա բնակիչները բաղկացած են երկու ազգերից՝ հայ լուսաւորչականներից և մահմեդականներից, որոնցից վերջինների թիւը մօտ 10 անգամ շատ է առաջիններից։ Այս վերջինների թւում կան և պարսկաց Թուրքեր, որոնք, կարելի է ասել որ Նուխու բուն բնակիչներ չեն, այլ քիչ քիչ եկած ու այստեղ արմատացած են։ Նուխու բուն հայերը մինչև 800 ծուխ են, կան և ուրիշ քաղաքներից եկածները, այնպէս որ ընդամենը 1000 տուն են։ Հայերը բնակված են քաղաքի ամենալաւ և ուղիղ տեղը և սրա համար էլ քաղաքումը ինչքան բաղեր կան բոլորը հայերին են պատկանում, իսկ Թուրքերը բնակվելով սարի վրա զրկված են այդիներից։ և որովհետև մեզ աւելի հետաքրքրում են հայերը քան թէ Թուրքերը, մենք մեծ մասամբ կը խօսենք հայերի վրա։ Հայերի պարապմունքը ձմեռը լինում է արհեստորը պարտաւորութիւն է դառել մեր քաղաքի միջի և աղքատ դասի համար։ Պէտք է խոստովանած, որ այս ամենալաւ սովորութիւններից մէկն է, որ տարածվել է մեր Նուխեցիների մէջ։ Ամառը այս արհեստաւորների մեծ մասը զբաղված լինելով ուրիշ գործերով, այսինքն Թութից արաղ քաշելով իրանց բաղերը պահպանելով մեսաքա չինելով, գինի քամելով և այլն, չեն կարողանում արհեստը շարունակել որովհետև սրանք աւելի օգուտ են բերում քան թէ արհեստը և նրա համար որ լեզգիները ամառը բերում են այստեղ մեծ քանակութեամբ չալ և եաւինջի (ծածկոց) իսկ նրանք առնում են այստեղից գլխաւորապէս արաղ և չթեղէն։ Հէնց այս է պատճառը, որ մեր Նուխեցիք ամառը բաւական մեծ փողեր են աշխատում, բայց ձմեռը սրանք սովորաբար սկսում են էլի իրանց արհեստը շարունակել։ Հարուստ վաճառականներ Նուխեցիներից շատ քիչ են։ Այստեղի վաճառականութիւնը գլխաւորապէս ագուլեցիների ձեռքին է, որոնք տասը տարիներով այստեղ այդ գործովն են պարապում։ Նուխեցիներին հարստացնողներից մէկն էլ ֆրանսիացիք են, որոնք ամառը գալով այստեղ առնում են մեծ քանակութեամբ կոկոն և մաքրել են տալիս որ կեղտն էլ հետը չը տանեն։ Այս գործը, այսինքն կոկոն իտակելը, կատարում է մեր քաղաքի աղքատ դասը, այսինքն աղքատ պառաւ կանայք, աղջկերք և երեխաներ, տանելով օրական 25-ից մինչև 35 կոպէկ վարձ, որ նրանց համար մեծ գումար է կազմում։ Այս գործովպարապում են 3 կամ 4 ամիս և ժողովում են ձմեռվայ համար բաւականի փող։ այնպէս որ երբ ֆրանսիացիները Ֆրանսիա են ուղում վերադառնալ մեր պառաւները ձեռքերը բարձրացնում են դէպի երկինք ու աղաչելով ասում են «Տէր Աստուած, դու փառանդների գործին աջողութիւն տաս որ եկող տարի էլ դան մեր քաղաքը»։ Հայերը ունեն երկու եկեղեցի և մէկ հոգեւոր դպրոց (կայ և մէկ գաւառական ուսումնարան) որ տեսուչների աշխատութեամբ շատ էլ գովելի դրութեան մէջ չէ։ Մեր քաղաքի մէկ զգալի պակասութիւնն էլ այն է, որ մենք մէկ օրիորդաց դպրոց չունենք, որտեղ որ մեր օրիորդները կարողանան ուսում առնել։ Միթէ դա հարկաւոր չէ մեր քաղաքին որ հազար ծուխ է կազմում, ինչ կարժեցայ սրանց համար մէկ օրիորդաց ուսումնարան բանալ։ Միթէ այսքան օրիորդներ որոնք կարող են ուսում առնել պէտք է մնան առանց ուսումի, լուսաւորութեան և կրթութեան։ Բաւական է ինչքան մեր քաղաքը մնաց այս դրութեան մէջ։ Մեր քաղաքի հարուստ և պատուաւոր անձինք հաւաքվում են մէկ յայտնի խանութ և չարախօսութիւն են անում ուրիշների համար խորհուրդ անելով, թէ՝ տեսնում էք փլանի արդան ինչ թանկագին չորեր է հագել։ Նրա հարկը պէտք է 5 ռուբլ աւելացնել։ Այսպէս ընթերցող մեր քաղաքացիք ախ ու վախով են հագնում նոր չորերը։ խնդրում եմ այդ հարկը աւելացնող պարոններին թողնել իրանց այդ վատ գործերը և մտածել քաղաքի լուսաւորութեան և ուրիշ պակասութիւնների վրա։ որոնք աւելի շատ օգուտ կը բերեն քաղաքին քան թէ առաջինը։

Կաշու գործարանը գտնվում է քաղաքի կենտրոնում, որտեղից որ այն կեղտոտ և հոտած ջրերը անցնում են քաղաքի միջով, տարածելով օդի մէջ իրանց անուշահոտները, որոնք ժողովրդի առողջութեանը շատ վնաս են։ Հիմա հարցնում եմ ինչու չեն աշխատում խնդիրք տալ կառավարութեանը, որ կաշու գործարանը տեղափոխեն քաղաքից մի հեռու տեղ։ Բայց չէ։ մեր պ. պ. այս բանի վրա երբէք չեն մտածել և չեն էլ ուզում մտածել և այժմս երբ հիւանդութիւնները արդէն սկսում են իրանց զօրութիւնները ցոյց տալ մեզ և երբ մի իմացող մարդ նրանց այս բանի համար ասում է, նրանք հեռևեալ խօսքերով են ճանապարհ գցում. «Դը-բուստ որ շատ ուսում առնողների խելքը պակասում է, գործ չունի, եկել է ասում է թէ եկէք դավի զալմաղալ արէք, որ կաշվի գործարանը տեղափոխեն. չէ ջանըմ չէ, դա մեր գործը չէ. ինչպէս մեր պապերը և հայրերը եղել են, այնպէս էլ և մենք թող լինենք»

Նուխեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մոզդոկ, 5 յունիսի

«Մշակի» այս տարվայ № 18-ում կարդացինք մի նամակ Վլադիկավկասից, որ անցնալ դեկտեմբերի վերջին պ. Ս. Մ. Կիրակոսեանցից ճաշի հրաւիրած ժամանակ հիւրերի մէջ ստորագրութիւն է բացվել յօգուտ հայ գաղթականների, և հրաւիրեալները եղել են Վլադիկավկասի հասարակութեան նշանաւոր անդամները։ Զը յիշելով դեռ ճաշկերոյթի բուն շարժառիթը և այն հանգամանքը, որ պ. նամակագրին ուղարկում են եղել մնացորդ փողի և թերթի համար «մէկը միւսի մօտ», ես իբրև հիւրերից մէկը և մասնակից ստորագրութեան, արդարև ամենայն հետաքրքրութեամբ սպասում էի մի ուրիշ նամակի «Մշակի», կամ մի այլ լրագրում, կարդալով գուցէ հիւրերից մէկը և կամ ինքը պ. Կիրակոսեանցը կը շտապէր պարզել պ. նամակագրի մութ կողմերը։ Ու ահա այսպիսի սպասող դրութենից յետոյ՝ ստանում ենք Վլադիկավկասից մի մասնաւոր նամակ գրած անցեալ փետրվարի 12-ից որտեղ, ի միջի այլոց գրում է մեզ հետևեալը. «Ձեր գնալուց յետոյ կիրակի օրը եկեղեցու մէջ ծանուցմամբ կրկին հրաւիրեցի ժողովրդոց նուիրատուութեան յօգուտ 20,000 (երևի ուզում է ասել 2 հազար) թշուառ ընտանեաց, և գոյացաւ ընդ ամենը 476 ր. որոնցից Սերեբրակեանցը ուղարկել էր «Մշակին» 177 ռուբլ, իսկ մնացածը ամսիս 8-ին Ս. Կիրակոսեանցը ուղարկեց իր անուամբ, չուտով կը կարդաք «Մշակի» մէջ... ստորագրութիւն։» Զը նայած, որ անա վերջանում է արդէն այս նամակից յետոյ մօտ չորս ամիս, մենք մինչև այժմ չը կարդացինք ոչ «Մշակում» և ոչ մի այլ հայ լրագրում փետրվարի 8-ին ուղարկված փողերի մասին, թէ ուր են գնացել։ Սակայն մենք դեռ յուսով ենք Վլադիկավկասի հայ հասարակութեան նշանաւոր անդամների մարդասիրական զգացմունքից, մանաւանդ պ. Ս. Կիրակոսեանցի ազնուութենից, (որին պատճառ էր գլխաւորապէս) որ նրանք չեն ջնջի իրանց ստորագրութիւնը, այլ եթէ մինչև այժմ չեն ուղարկված մնացորդ փողերը ուր հարկն է և դեռ մնում են անհոգութեամբ, կը շտապեն աշխատել (մանաւանդ եթէ մի փոքր աշխատութիւն էլ յանձն առնեն արժ. Կուսիկեանց և Միրանեանց հ. հ.) օր առաջ ժողովել և հասցնել իր նպատակին և կամ նուիրել յօգուտ «Արարատեան ընկերութեան» վանի գիշերօթիկ հայ վարժարանին։

Խնդրում եմ, պ. խմբագիր, տեղ տալ մեր այս նամակին ձեր օրաթերթի մէջ։

Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒԼԱՒԻԷՐ գիւղից մեզ գրում են. «Անցեալ ամիսներում մեր գիւղին այցելութիւն արեց թեմական տեսուչ պ. Յակոբ Տէր-Յովհանիսեանը։ Նա մեր ուսումնարանը գտաւ շատ ողորմելի դրութեան մէջ։ Պ. տեսուչը համոզեց գիւղացիներին յատկացնել ուսումնարանին մի քանի աղբիւրներ, որոնցով ուսումնարանը կարող է ստանալ մօտ 2000 ռուբլ տարեկան։ Բացի այդ տեսուչը առաջարկեց բաց անել օրիորդաց դըպրոց։ Հասարակութիւնը վճռեց ընդունել պ. Յ. Տէր-Յովհանիսեանցի բոլոր առաջարկութիւնները։ Շուլաւերցիք շատ չնորհակալ են պ. Տէր-Յովհանիսեանից նրա բարի խորհուրդների համար։»

—

«Մշակի» անցեալ համարում ներքին լուրերի մէջ գրել էինք օր. Դարիա Սահակեանցի վերջին թարգմանութեան մասին։ Այդ գրքոյկի բովանդակութիւնը բաւական հետաքրքիր է։ Օրիորդը գրքոյկի գինը 5 կոպէկ նշանակելով, նրան բոլոր կարգի երեխաների համար մատչելի է արել։

—

«Тифл. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ տիկին Զենի-Բայի տուած կօնցէրտից զուտ արդիւնք մնացել է 17 ռուբլ։

—

Այսուհետև Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու գնացքների մէջ կը ծախվեն հետևեալ լրագիրները՝ «Մշակ», «Դրօշէբա», «Тифл. Вѣстн.» «Обзоръ», «Кавказъ», «Голосъ»։ Բացի այս լրագիրները կենտրոնական գրավաճառանոցը երկաթուղու վրա կը ծախի Թեմա ընթերցանութեան գրքեր։ Լրագիրները և գրքերը կը ծախվեն նոյնպէս հետևեալ կայարաններում. Թիֆլիս, Միխայլովо, Ռէժէուբանի, Կվիրիլի և Փոթի։ «Голосъ» արժէ 10 կոպ., «Դրօշէբա» 5 կ., իսկ մնացած լրագիրների հարը 8 կոպ.։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՖՐԱՆՍԻԱ

Պատերազմի կուսակիցներից շատերը որոնք միշտ փոթորկալի ամպեր են տեսնում Եւրոպայի քաղաքական հորիզոնի վրա, կարծում են թէ Ֆրանսիան իր շահերից ստիպված, պէտք է լինի Անգլիայի անբաժան դաշնակիցը, եթէ անգլօ-ռուսական պատերազմ պատահի։ Պ. Վադինգտոնի արած յայտարարութիւնը յունիսի 7-ին պատգամաւորների ժողովում, և մինչև անգամ մէկ հակառակ ձայն չը լինելով բոլոր պատգամաւորներից այդ քաղաքականութեան ընդունվելը՝ պարզապէս ցոյց է տալիս թէ ամբողջ Ֆրանսիան խաղաղութիւն է կամենում և թէ նա բոլորովին մտադիր չէ պատերազմին մասնակցելու։ Ֆրանսիայի կառավարութիւնը կօնգրէսին մասնակցելու համար մի գլխաւոր պայման միայն առաջարկած է որ ընդունված է։ Իր պայմանն է չը վիճաբանել կօնգրէսում այն հարցերի վրա որոնք ուղղակի յարաբերութիւն չունեն 1877-ի ռուս-թիւրքական պատերազմի հետ։ Աւելի պարզ խօսելով, Ֆրանսիան կօնգրէսին մասնակցելու համար պայման առաջարկած է որ Եգիպտոսի, Լիբանանի և Ս. տեղերի վերաբերութեամբ արդէն հաստատված դաշինքները վիճաբանութեան չենթարկվեն։

Յունիսի 7-ին (մայիսի 26) պատգամաւորների ժողովում պ. Լէօն Բընօլա մի առաջարկութիւն ներկայացրեց հետևեալ խօսքերով։ «Մի քանի օրից յետոյ երկու խորհրդարանների նիստերը կը դադարեն և նոյն ժամանակ դիպլոմատիական Եւրոպան կը հաւաքվի Բերլինում։ Մեծ շահերի վերաբերութեամբ պէտք է վիճաբանվի կօնգրէսում։ Հետևապէս ես և իմ բարեկամներս կարծում ենք թէ յարմար ժամանակ է հարցնելու արտաքին գործերի մինիստրին թէ ինչ քաղաքականութեան հետևել մտադիր է։ Ֆրանսիան կամենում է խաղաղութիւն. նա ուզում է որ դեկտեմբերի 14-ի կաբինէտը ամեն միջոցներով աշխատէ յօգուտ խաղաղութեան և մի և նոյն ժամանակ յարգել տայ Ֆրանսիայի շահերը։ Ապահով եմ որ իմ այս խօսքերով ժողովրդի զգացումն էլ ներկայացրած կը լինեմ և տարակոյս չունեմ թէ արտաքին գործերի մինիստրն էլ ինձ համակարծիք է։»

Պ. Վադինգտոն պատասխանում է այսպէս։ «Պարոններ, խորհրդարանը յիշում է որ անցած մայիս ամսի 9-ին, Պ. Դրէօլի հարցումին պատասխանած ժամանակ, խոստացած էի խորհրդարանին յայտնել արդի կաբինէտի արտաքին քաղաքականութիւնը, նաև՝ դադարելուց առաջ։ Երէկ պ. Դրէօլի և այսօր պ. Լէօն Բընօլայի խօսքերը լսելուց յետոյ, ես բոլորովին համոզված եմ որ երբ հարցը վերաբերվում է Ֆրանսիայի շահերին արտաքին քաղաքականութեան մէջ, խորհրդարանի բոլոր նստարանների վրա կարծիքները միացած են և ամեն սիրտեր միաձայն են բարախում այստեղ։ (Ծափահարութիւններ։)

«Անցած ձմեռ ծանր գործեր կատարվեցան Բալկանեան թերակղզում։ Ռուսական բանակը, երկար դիմադրութենից յետոյ, գրաւեց Պլէվնայի դծերը և ձմեռվայ մէջտեղ հերոսական ջանքերի շնորհով անց կացաւ Բալկաններից և տարածվեցաւ Բօլգարիայի դաշտերում։ Արագընթաց հասաւ նա Ադրիանօպոլ և քիչ յետոյ Կ. Պօլսի դռները։ Այն ժամանակ մեծ յուզմունք եղաւ Եւրոպայում, մանաւանդ Անգլիայում, այնպէս որ մինչև մի ժամանակ կարելի էր վախենալ թէ Անգլիայում սիրող յուզմունքը կառաջնորդէ պատերազմը։ Այդ ժամանակ ի՞նչ էր Ֆրանսիայի դրութիւնը, ի՞նչ էր Ֆրանսիական կառավարութեան պարտաւորութիւնը։ Ֆրանսիան մի գլխաւոր շահ ունէր խաղաղութեան պահպանվելու մէջ։ Նա որոշել էր խաղաղական մեծ գործերի ձեռնարկել, երկաթուղու մի ընդարձակ գծի շինութիւնը շարունակել. նա որոշել էր իր վարժարանների, իր ֆակուլտէտների վերակազմութեան մեծ գործը սկսել, ուսումը և դաստիարակութիւնը տարածել ժողովրդի ամեն ասպիճանների մէջ, մի սաստիկ զարկ տալ այդ գործին, մեծ զոհողութիւններ անել այդ նպատակի համար. բացի այս, նա զբաղված էր իր զինուորական կարգադրութիւնների վերանորոգութեան գործով։ Ուրեմն իր առջև ունէր մի այնպիսի մեծ աշխատութիւն որ իր համար հարկաւոր էր լինում խաղաղութեան երկար ժամանակ պահպանվելը։ Նաև, այս տարի մի մասնաւոր պատճառ կար որ պարտաւորացնում էր նրան խաղաղութեան գործի մէջ. այն է համաշխարհական արուեստահանդէսը։ Ֆրանսիան հրաւիրած էր ամբողջ Եւրոպային իր մօտ գալու. նա պարտաւոր էր ցոյց տալ թէ ինքն աշխատում է պահպանել խաղաղութիւնը Եւրոպայում։ (Շատ լաւ, շատ լաւ)։ Մենք այս դրութեան մէջ գտնվում էինք երբ հարկ եղաւ մեր կարծիքը յայտնել այն ծանր հարցերի վերաբերութեամբ որոնք յուզվում էին Եւրոպայում։ Վերջապէս, անցած փետրվար ամսում, աւստրօ-ունգարական կառավարութիւնը մի կօնգրէս հրաւիրելու ինիցիատիվն ունեցաւ։ Այդ հրաւէրը խիստ ընդունվեցաւ մեզանից։ Այդպէս էին պահանջում Ֆրանսիայի ճշմարիտ շահերը, որովհետև խաղաղութիւնը Եւրոպայում պահպանելու համար մի կօնգրէսի գումարվելը ամենաազդու միջոցներից մէկն էր, որ հարկաւոր էր փորձել։ Հետևապէս, մենք առանց վարանելու ընդունեցինք, միայն երկու պայման առաջարկելով։ Առաջինը այն էր որ 1856-ի դաշնագրին ստորագրող բոլոր տէրութիւնները ներկայ գտնվեն կօնգրէսում։ Երկրորդ պայմանը —աւելի կարևորը,—այն էր որ կօնգրէսում պէտք է վիճաբանվեր այն հարցերի վրա միայն որոնք բնականապէս և ուղղակի ծագել էին վերջին պատերազմից (շատ լաւ)։ Թէ ոչ միայն արևմուտքի գործերի վերաբերութեամբ որ և իցէ խնդիր պէտք չէր յարուցանել, որոնցով, այնուամենայնիւ, ոչ ոք չէր զբաղվում այն ժամանակ, այլ և չը պէտք էր հարց բարձրացնել արևելքի այն գործերի վերաբերութեամբ որոնց հետ կապ չէ ունեցել վերջին պատերազմը։ Մեր միտքը աւելի պարզելու համար, նոյն իսկ փետրվար ամսում, մենք յայտնեցինք թէ ուզում ենք որ կօնգրէսում վիճաբանութիւն չը լինի այնպիսի հարցերի վրա, ինչպիսի են Եգիպտոսի, Լիբանանի և Սուրբ տեղերի (Երուսաղէմի) հարցերը։ (Շատ լաւ, շատ լաւ)։ Նոյնպէս մենք խնդրեցինք որ Սան-Ստէֆանոյի դաշնագրում չը նշանակված հարցերը կօնգրէսի աշխատութիւնների շրջանից դուրս համարվեն։ (Շատ լաւ, շատ լաւ)։ Եթէ մենք հեռացրինք այն հարցերը որոնք մի քանի

կողմերից վերաբերվում էին դէպի մեր ազգային շահերը, դէպի Ֆրանսիայի ունեցած հրապուրող ազդեցութիւնը (prestige) արևելքում, գլխաւոր պատճառը եղած է Եւրոպայի ընդհանուր շահերը պաշտպանելու, խաղաղութիւնը պահպանելու ցանկութիւնը։ Շատ հարկաւոր էր հեռացնել ամեն բան որ ուղղակի վէճի ենթարկված և հարցերի կարգը գրված չէր. փոխանակ կոնգրէսի գործերի շրջանը ընդարձակելու, սկզբից հարկաւոր էր սահմանափակել։

«Բոլոր տէրութիւնները, առանց բացառութեան, ընդունեցին մեր այդ նկատողութիւնները։ Բացի այն յայտնի և ճշմարիտ շահից որ ունէր Ֆրանսիան խաղաղութիւնը պահպանելու մէջ, մի այլ պատճառ էլ կար որի համար ընդունած էինք մասնակցել կոնգրէսին։ Մենք չէինք կարող մոռանալ թէ 1856-ի և 1871-ի դաշնագրութիւնները Ֆրանսիայի ստորագրութիւնն էին կրում և չէինք կարող ընդունել որ այդ դաշնագիրները փոփոխվէին առանց հաւանութեան բոլոր ստորագրող տէրութիւնների։ (Շատ լաւ, շատ լաւ)։ Մենք հաւատարիմ ենք մնացել այդ քաղաքականութեան և թէպէտ մի քանի անգամ հրաւիրվեցանք մեր կարծիքը յայտնել Սան Ստէֆանոյի դաշնագրի մանրամասնութիւնների վերաբերութեամբ, բայց մերժեցինք, ասելով թէ այդ կոնգրէսի գործն է և թէ քանի որ մի կոնգրէսի գումարվելու յոյս կայ, Ֆրանսիան չի կամենայ այժմ իր խորհուրդները յայտնել, այլ կը յայտնի Եւրոպայի ներկայացուցիչների առաջ միայն։ (Շատ լաւ, շատ լաւ)։ Կոնգրէսի բացումի համար բանակցութիւնները զանազան ձևեր ստացան։ Աւստրօ-ունգարական կառավարութեան ինիցիատիվով սկսվելուց յետոյ, վերջին ժամանակներում, Բերլինի կաբինէտը շարունակեց բանակցութիւնները և ուրախութեամբ յայտնում եմ այժմ որ յօգուտ խաղաղութեան նրա արած եռանդուն միջամտութեամբ աջողվեցան։

«Երկրորդական հարցերի համար, որպիսի են կոնգրէսի կայանալու տեղը, նրա կազմութիւնը, մենք ամեն կերպով դիւրաշարժ ձայնող ցոյց տվեցինք մեզ, որովհետև դրանք աննշան հարցեր էին համեմատելով այն գլխաւոր շահի հետ որ կունենայինք կոնգրէսին հանելով և կոնգրէսից էլ դէպի խաղաղութեան պահպանութիւնը։ (Շատ լաւ, շատ լաւ)։ Վերջապէս, շատ դժուարութիւններից յետոյ՝ կարելի եղաւ համաձայնվել հրաւիրագիրների գրութեան ոճին (ֆորմիլ) որոնք ուղարկվեցան Բերլինից։ Ուրախ օրի չափ կայ որ Ֆրանսիական կառավարութիւնը ընդունած է իրան պատկանած հրաւիրագիրը։»

Ահա կոնգրէսի հրաւիրագրի պատճէնը։

«Փարիզ, 3 յունիս 1878։ Ստորագրեալս, նորին մեծութեան Գերմանիայի կայսրի, Պրուսիայի թագաւորի արտակարգ և լիազօր դեսպան, պատիւ ունեմ առաջարկել 1856-ի և 1871-ի դաշնագիրների ստորագրող տէրութիւններին, կոնգրէսի ներկայանալու Բերլինում, այնտեղ վիճաբանելու համար Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ կապված Սան-Ստէֆանոյի նախնական դաշնագրի պայմանների վրա։ Նորին մեծութեան կառավարութիւնը այդ հրաւէր անելով Ֆրանսիայի հանրապետութեան կառավարութեանը, կարծում է որ Ֆրանսիական կառավարութիւնը կը հաւանի Սան-Ստէֆանոյի դաշնագրի ամբողջութեան վրա ազատ վիճաբանութիւնը ընդունելու և պատրաստ է նրան մասնակցելու։ Եթէ բոլոր հրաւիրված տէրութիւնները հաւանին, Ն. Մ. կառավարութիւնը առաջարկում է որ կոնգրէսը հաւաքվի առաջիկայ յունիսի 13-ին։ Ստորագրեալը տեղեկացնելով այս նորին վսեմութեան պ. Վադդինգտոնի, արտաքին գործերի մինիստրին, պատիւ ունի աղաչելու որ բարեհաճի իրան հաղորդել, որչափ կարելի է շուտով, Ֆրանսիական հանրապետութեան կառավարութեան պատասխանը։ Ստորագրուած Հօհենլօհէ։»

«Այսպէս, դուք տեսնում էք որ երկար բանակցութիւններից յետոյ, դաշնագիրները յարգելու և Եւրոպայի համաձայնութիւնը պահպանելու քաղաքականութիւնը յաղթանակեց և Սան-Ստէֆանոյի դաշնագիրը ամբողջապէս կենթարկվի կոնգրէսին։ Այդ այն քաղաքականութիւնն է որ մենք միշտ պաշտպանած էինք։ (Շատ լաւ. շատ լաւ։) Ահա Ֆրանսիական կառավարութենից գրված պատասխանը Բերլինի կաբինէտին։»

(Կը շարունակվի)

ՖՐԱՆՍԻԱ

Կղերական լրագիրները հրատարակել են Օրլէանի եպիսկոպոս պ. Դիւպանլուից պ. Վիկտոր Հիւգոին ուղարկված մի նամակ։ Պ. Վիկտոր Հիւգոն այդ նամակին պատասխանել է հետևեալը։

«Փարիզ, 3 յունիսի, 1878։ Օրլէանի պ. եպիսկոպոսին։

«Պարոն, դուք մի անխոհեմութիւն էք անում։ Ցիշեցնում էք նրանց որոնք մոռացել էին, թէ մի եկեղեցական մարդ դատապարտած է ինձ երեսուն ժամանակ և թէ իմ կեանքը լի է նախապաշարումով և մոլորութեամբ։ Քահանաների մեղն է այդ և ոչ թէ իմ։ Կղերի դատապարտութիւնը այնպէս աղէտալի է որ գրեթէ «քառասուն տարի», ինչպէս դուք հաստատում էք, ես դեռ կրում էի նրա ազդեցութիւնը իմ վրա։ Այդ ամենը արդէն ասված է. հեռաւապէս երկար չեմ խօսում այդ մասին։ Ես մի փոքր արհամարհում եմ անօգուտ բաները։

«Դուք յարձակվում էք Վոլտէրի վրա և ինձ նախատելով պատիւ էք բերում ինձ։ Այդ ձեր գործն է։ Դուք և ես, երկուսս էլ հակառակ մարդիկ ենք։ Ապագան կը դատի։ Ասում էք թէ ես ծեր եմ և ուզում էք հասկացնել թէ դուք երիտասարդ էք։ Ես էլ այնպէս եմ ընդունում։

«Ձեր բարոյական զգացումը այնչափ քիչ է որ դուք ինձ «ամօթ» էք համարում այն ինչ որ պատիւ է ինձ համար։

«Դուք կամենում էք, պարոն, ինձ դաստալ։ Ի՞նչ իրաւունքով։ Ոչ էք դուք։ Դիմենք դէպի իրողութիւնը։ Ահա իրողութիւնը այս է. ի՞նչ է ձեր խիղճը և ի՞նչ է իմ խիղճը։ Բաղդատենք նրանց. մի անգամ իրար մոտեցնելը բաւական է։ Ֆրանսիան մի փորձութեան միջից անցկացած, ազատված է։ Ֆրանսիան ազատ էր. մի մարդ, մթան մէջ, դաւաճանութեամբ բռնեց նրան, գետին խփեց և ձեռքերը ոտները կապեց։ Եթէ կարելի լինէր սպանել մի ժողովրդի, այդ մարդը սպանած կը լինէր Ֆրանսիային։ Նա այնչափ մահացրեց նրան որ կարողացաւ տիրապետել նրա վրա։ Նա սկսեց իր իշխանութիւնը սուտ երդում անելով, դաւանակալութեամբ և կոտորածով։ Շարունակեց հարստահարութեամբ, բռնաւորութեամբ, դէպօտութեամբ, կրօնի և արդարութեան վրա մի տեսակ բանաստեղծութեամբ որ տանում էր դէպի խեղկատակութիւն և որին բացատրելու համար բառ չէ կարելի գտնել։ Նա ահագին մեծութիւն ունէր. մի և նոյն ժամանակ և փոքր էր։ Նրան երգում էին «Te Deum» (շքեղ Աստուած փառաբանեմք) «Magnificat» (մեծացուսցէ) և այլ փառաբանական երգեր։ Ոչ էր երգում այդ երգերը։ Դուք ձեզ հարցրէք։ Օրէնքը նրան յանձնեց ժողովուրդը, եկեղեցին նրան յանձնեց Աստուածը։ Այդ մարդու իշխանութեան ներքև խայտառակված էին իրաւունքը, պատիւը, հայրենիքը։ Իր ոտների տակ դրած էր երդումը, արդարութիւնը, համեստութիւնը, դրօշակի փառքը, մարդկերանց արժանապատուութիւնը, քաղաքացիների ազատութիւնը։ Այդ մարդու աջողութիւնը վրդովեցնում էր մարդկային խիղճը։ Տաս և ինը տարի տևեց այդ։ Դուք այդ ժամանակ պալատումն էիք, ես աքսորի մէջ։ Ցաւում եմ ձեր դրութեան վրա, պարոն։ Վիկտոր Հիւգո։»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Հին-Բայազէթ 3 յունիսի

Ուսումը և կրթութիւնը թէև մարդկութեան երկու սեռին էլ անհրաժեշտ հարկաւոր և օգտակար է, բայց աւելի իդեալական սեռին, որովհետև այս սեռը ծնում է մարդկութիւնը. և մարդկութեան սկզբնական կամ նախնական դաստիարակները սրանք են։ Մի խօսքով մարդկութիւնը և մանաւորապէս իւրաքանչիւր ընտանիքի մէջ ծնվող զաւակներ պարտաւորվում են իրանց կեանքի վեցից մինչև եօթը տարին մայրերի թեւերի տակ առանձին կեանք վարելու, և իրանց մայրերի ամենափոքր և աննշան մի չարժուածքին անգամ մեծ նշանակութիւն տալով, թէ բարի և թէ չար տպաւորում են իրանց փափուկ սրտի մէջ. նաև մայրերը իբրև հայելի իրանց զաւակներին կարող են պատրաստել նրանց համար բարի և չար, օգտակար և վնասաբեր ապագայ։ Այս իրողութիւնը ամենքին քաջածանօթ լինելով, որովհետև դարուս ներշնչութիւնը ու հոգին է, երկարօրէն չը խօսելով, ես էլ կը դատապարտեմ այն կոյր, վնասակար և կանխակալ վատ սովորութիւնը, որ անգիտակցաբար արգելում է իդեալական սեռի դաստիարակութիւնը, ուսումը և կրթութիւնը, որից այնպիսի վատ հետևանքներ են առաջանում, որ իմ գրչիս պէս տկար ու անվարժ գրիչը չէ կարող նկարագրել։ Անկրթութեան մէջ աստուածային օրէնութիւնը անէծքի է փոխվում. այն աղջիկը, որին ամուսնական կեանքի մէջ յանձնվում է մի ընտանիքի կամ գերդաստանի բաղդի և երջանկութեան դեկը, գնալով մեծամեծ թշուառութիւնների խորերն է գցում այն գերդաստանը, և նոյն ինքն իր ամուսնուն ընկեր և լծակից լինելու փոխարէն, լծընկեց ամեհի գազան է ձեւափոխվում, այնպիսի անկիրթ գազան մի, որ փիլիսոփայի ասածի պէս երկիրը անգամ չէ կարող կրել, ուր մնաց տկար մարդկութիւնը. և անշուշտ այսպիսի գազանը իր նմանը պիտի արտադրէ, որոնց զորութիւնը միանալով լաւ քանդեն գերդաստանը։ Եթէ իդեալական սեռի կրթութեան և ուսման հարկաւորութիւնը զգացած են ուրիշ երկիրներում բնակվող հայերը, մեր Բայազէթը դեռ քնում է, դեռ անտարբեր է, դեռ այս սեռի անկրթութեան դառն հետևանքները կրում և չէ զարթնում։ Դեռ նա այնպէս է համարում թէ մեղք գործած կը լինի երբ որ այդ ճնչված սեռը ուսումով սովորի իրան հաւասար դատել, մտածել, կշռել, տնտեսել, և կառավարել. որովհետև սովոր է ամեն ծանրութիւն իր վրա առնել բայազէթցին, իբր թէ այն սեռը ոչ իրաւունք և ոչ ընդունակութիւն կամ կարողութիւն ունի այս բաները անելու։

Բայազէթցիների իդեալական սեռի գլխաւոր զբաղումներն են՝ հրապարակների մէջ խումբ խումբ դատարկաշրջիկ և զրախօս լինել, անբարոյական վէպերով և զզուելի պատմութիւններով անմեղների վարք ու բարքը ապականել, մէկ մէկուն բամբասելով, կռիւներ և վէճեր ծագվելու պատճառներ գրգռելով։ Ի՞նչ և է միտքս համաքաղաքացի քոյրերս անպատուել չէ, որոնց իբրև դրացի և բարեկամ աւելի պատուել պարտաւորութիւնս է. այլ այս խօսքերով անբարոյականութիւնը և անկրթութիւնը վերացաբար անարգելով, սիրով կը հրաւիրեմ նրանց որ այսուհետև այդպիսի անարգ ընթացքները ատելով կարգաւորութեան և կրթութեան քաղցր լուծի տակը դնեն իրանց, աշխատեն կրթելու և ուսում տալու ոչ միայն իրանց արու զաւակներին, այլ և աղջիկներին էլ, որով հայի համար կրթված և ուսեալ մայրեր պատրաստեն, և իրանց աշխատանքի արդիւնքների վերջին կոպէկն էլ աղջկերանց կրթութեան ուսման համար զոհեն, որով այնպիսի մի զարդարանք կը պատրաստեն իրանց զաւակներին, որ ոչ ճէլօն կարող է յափշտակել, և ոչ ցեցը ապականել Ս. Աւետարանի ասածի պէս։

Պ. Խմբագիր. հաճեցէք երկոսս ձեր լրագրի մէջ հրատարակել. յանուն կրթութեան և յօգուտ Բայազէթի քոյրերին։

Երիցուհի ոմն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինից հեռագրում են «Голосъ» լրագրին. «Մի քանի օր է արդէն, որ այստեղ գտնվում է հայոց պատգամաւորութիւնը խորէն Նարբէյ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ։»

—«Etoile» լրագիրը գրում է որ Բրիւսսէլի արքունիքում լորդ Բիկոնսֆիլդին ճաշ տրված ժամանակ, թագաւորը մի տօստ է առաջարկել Անգլիայի թագուհու, կոնգրէսի աջողութեան և խաղաղութեան համար։ Լորդ Բիկոնսֆիլդ իսկոյն ոտի կանգնելով, թագաւորին պատասխանել է Վիկտորիա թագուհու անունով և ասել է թէ «քանի որ մի Անգլիա կը լինի աշխարհի վրա, կը լինի նաև մի Բելգիա։» Այդ խօսքերը այնպիսի տպաւորութիւն են ունեցել Բրիւսսէլի արքունիքում որ մեծ արձագանք կունենան Բելգիայում և մինչև անգամ Եւրոպայում։

—Լոնդոնից յունիսի 13-ին հեռագրում են հետևեալը։ «Ասում են որ Աւստրիան Սերբիայի և Չերնոգորիայի վերաբերութեամբ կառաջարկի կոնգրէսում որ այդ իշխանութիւնները կամ մէկ դաշնակցութիւն կազմեն Աւստրիայի պաշտպանութեան ներքև և կամ պատերազմական պայմանագրութիւններով կապվեն Աւստրիայի հետ։ Վստահացնում են որ առաջ քան թէ կոնգրէսի բաժանվելը Գերմանիան կառաջարկէ վիճաբանութիւն սոցիալական հարցի վրա։

—«Times» լրագիրը գրում է որ եթէ Ռուսաստանը յետ դարձնի Բայազէթը, Բաթումի և Ղարսի Ռուսաստանի հետ միանալը չի վնասի Անգլիայի կենսական շահերին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 98 ր., երկրորդ 96³/₈ ր., երրորդ 95¹/₈ ր., չորրորդ 96 ր., ներքին առաջին փոխառութեան 5% տոմսակը արժէ 238 ր. երկրորդ 222 ր. 50 կ., արևելեան 94 ր. 75 կ., ոսկին 8 ր. 4 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24⁵/₈ պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 209 մարկ, Փարիզի վրա 257 ֆրանկ։ Տրամագրութիւնը հանգիստ է։

Կ. ՊՕԼԻՍ, 12/24 յունիսի։ Կ. Պօլսի մօտ շարունակվում են ռուսաց և Թիւրքաց զօրքերի տեղափոխութիւններ։

ՎԻԵՆՆԱ, 12/24 յունիսի։ Թիւրքաց զօրքը Գալիպօլիի և Բուլայիրի մօտ նշանաւոր կերպով ամրանում է։ Զօրքին առաջնորդում է Օսման-Նուրի-փաշան, գործակցութեամբ Աբրահամ և Հաջի-Ալի-փաշաների։

ԲԵԼԳՐԱԴ, 12/24 յունիսի։ Իր պատերազմական ոյժը լրացնելու համար Սերբիան ստացել է Ռուսաստանից 60,000 ոսկի։ Տօտլեբէն ուղարկեց սերբական գլխաւոր բանակը ռուս օֆիցէրներին Հին-Սերբիայի և Արևմտեան Բոլգարիայի մէջ սահմանագծեր նշանակելու համար։

ԲԵՐԼԻՆ, 13/25 յունիսի։ Ռուսաստանը համաձայնվեց իրաւունք տալ Թիւրքիային գրաւել Բոլգարիայի սահմանների գտնվող բերդերը։ Սա զիջողութիւնների վերջին սահմանն է։ Միւս կողմից վճռված է միացնել բոլգարական իշխանութեանը Սոֆիա քաղաքը իր սանջակով։ Այդպիսով բանակցութիւնները փոխադարձ զիջումների ձև են ստանում։ Բոլգարիայի վերաբերութեամբ լինելու խնդիրների քննութեան համար կը հարկաւորվեն դարձեալ կոնգրէսի մի քանի նիստեր։ Բոլգարիան ինքն կընտրէ իր իշխանին։ Ռուսաց լիազօր ներկայացուցիչները խորհուրդ են տալիս Սերբիային և Չերնոգորիային անմիջապէս Աւստրիայի հետ համաձայնվել իրանց ունեցած պահանջների վերաբերութեամբ, որպէս զի կոնգրէսի աշխատանքը ապահովվի։

ՅԱՅՏ ԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են՝ ԿԱՐԲՈԼԵԱՆ հեղուկ և փոշի տարափոխիկ հիւանդութիւնների դեմ 1½ ր., ԽԻՆԱՑԻ ԻՒՂ 1¼ ր., ցեսարատ մագնեզիայի 2 ր., ՐՕՄ, ԿՕՆԻԱԿ, ՊՕՐՏՎԷՅՆ, ԽԵՐԷՍ և անգլիական օղի 1½ ր., ճանապարհի ամաններ գիւժինը 3 ր., թէյի գդալներ (չեն սեւանում) 1½ ռուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80 կ., ճանապարհի ֆիլտրներ 4 կ., մատիտներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18 հատը 5 կ., ասեղներ 1000 հատը 80 կ., ծածկոցներ, մանկական շորեր և չը թրջվող վերարկուներ 4 ռուբլ և բարձր, գլխարկներ և ժիլետներ 75 կ. և բարձր, կտաւ 10 ր. և բարձր, տրիկո 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ 60 կ. և բարձր, բամպէի 1 ր. արշինը, շղթաներ (Արիսինիայի ոսկուց) 50 կ. մինչև 3 ր.: Մի և նոյն խանութում շուտով կը ստացվեն ՍԱՀԱԿԱԼԵՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑՆՈՂ անուանված մի գեղ, և այլն:

10—20

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են ՍՊԻՏԱԿ ՐՈՒՄԱՁԷՑԱ զինուորականների շորերի համար արշինը 1 ր. և բարձր, ՈՒԻՆՍԻ շորերի համար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 կ., ՓՕՇԻՆԵՐ տարափոխիկ հիւանդութիւնների դեմ և ԽԻՆԱՑԻ ՌԱԼԶԱՄԵՆ (իւղ) 1¼ ր., ՍԱՊՕՆ 10 կ. և բարձր, ՑԻՏՐԱԴ մագնեցի 1½ ր., ԲԻՍԿՎԻՏՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., երկաթեայ մահճակալներ 5 ր. և բարձր, սղոցներ 50 կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ գիւժինը 3 ր., ԳՐԻԶՆԵՐ արզը 15 կ. և բարձր, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ, արական ԹԱՄԲԵՐ 40 ր. և բարձր. ԻԳԱԿԱՆՆԵՐ 70 ր. և բարձր, ծածկոցներ, մակենոցներ, երեխաների շորեր 4 ր. և բարձր, հիանալի վերարկուներ 12 ր. և աւելի, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէքներ և պղնձներ 10 կ. և բարձր, ՐՕՄ, կոնեակ, պորտվէյն, խերես և անգլիական օղի 1½ ր., ՊԱՆԻՐ չեստեր 60 կ. և բարձր: Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը:

1—20

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ԲԱԺԱՆՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

«ՓՈՐՁ» երամեայ հանդիսի

IՎ գիրքը:

Բովանդակութիւն. Կռուածաղիկ, ազգային վիպասանութիւն (վերջ) Գ. բ՛. Պռաշեանցի.—Գաղթականութեան խնդիրը, Ա. Պալասանեան.—Ափսոս աշխատանք, բանաստեղծութիւն, Գ. Բարխուդարեանց.—Ուղղարիայի ազգութիւնները, գործ Պետերսօնի. Վան քաղաքի նկարագրութիւնը, Մ. Անանեան.—Գաւառական բարբառները և տեղական տարրը ուսման մէջ. Գ. Տ. Ա.—Արուեստական աշխարհահանդէսները և 1867 թ. Փարիզի աշխարհահանդէսը, դասախօսութիւն պրոֆէսսոր Լավոլէյի.—Ի՞նչ կայ,—բնագիտական նկատողութիւն, Աբիսողոմ Յովհաննիսեանց.—Երկու բանաստեղծութիւն Հէյնէից, Գ. Բարխուդարեանց.—Ճանապարհորդական նկատողութիւնք, Քաջբերունի։ Մատենախօսութիւն՝ էջմիածնայ դպրատան հրատարակութիւնները, Գրիչ.—Դոն Քիշոտ Լամանչեցի, թարգմանութիւն Յար. դպրի Առաքելեան, Գրիչ.—Անէքդոտների Մանցոնեայ խոստացեալք (promessi sposi), թարգմ. ի ձեռն Հ. Եղուարդայ Հիւրմիւզեան, Գրիչ—Victor Jebé, catalogue de journaux publiés ou paraissants à Paris։ Ազգային տեսութիւն, Հայաստանի անկախութիւնը և «դեսպանաժողով ու հայերս գրքոյկ։ Քաղաքական տեսութիւն։ Յայտարարութիւններ։

—

Եկող յուլիս ամսուց «Փորձը» սկսում է իր երրորդ շրջանը։ Այս շրջանում «Փորձը» կը հրատարակուի մի և նոյն ուղղութեամբ և մի և նոյն աշխատակիցների գործակցութեամբ։

Տարեկան գինը մնում է 10 ր.։

Անցեալ շրջանների գրքերը կարելի է ստանալ խմբագրութեան մէջ, ուր և բացուած է երրորդ շրջանի ստորագրութիւնը հասցէն. Тифлисъ. редакція журнала «Пордзъ». галлерея Арцруни на Дворцовой улицѣ. Արտասահմանից, Tiflis, redaction du journal Pords.

Խմբագիր Հրատարակիչ Արշար Յովհաննիսեան

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ

ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇԻՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Ծաղիկնայա փողոցի վրա Յունայ եկեղեցու դիմաց տուն № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպառողներին, որ այդ գործարանում դրծվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ ԿԱՇԻՆԵՐ կօշիկների, թամբերի, կառքերի պրուեսների համար և նոյնպէս հում կաշիներ։

Մեծ քանակութեամբ վաճառելը կատարվում է գործարանի կանտօրայում, որտեղ ընդունվում են և պատուէրներ։ Մաս մաս ծախվում է Սիօնի մայր եկեղեցու դիմաց գտնվող մագազինում։

25—23 (2)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ աւարտած գիմնազիական կուրսը պատրաստում է երեխաներին ամեն տեսակ ուսումնարանների համար։ Հասցէն կարելի է իմանալ ԿՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, Պ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ։

1—2

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՏԱՔԱՀԱՆԱՑ, որ իր ուսումը ստացել է Ներսիսեան Դպրոցում, ուր և ունի ուսուցչի պաշտօն, գնալով ամառանոց ԿՕՋՕՐԻ ԿԸ ՏԱՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ. ցանկացողները կարող են հարցնել Կօջօրի Հայոց եկեղեցու սենեակներում։

1—3

ԿԻՍ՝ կարելի է ստանալ ամեն ժամանակ Կուկիայում, Նիկոլաեվսկի փողոցի վրա Վ. Լ. Պապովի և ընկ. սպիրտի պահեստին կից։ Տուն № 44։

1—3

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ, ծախվում են ի միջի այլոց հետեւեալ հայերէն նոր գրքերը.

1. Փոքրիկ ժողովրդական Այբբենարան գիւղական ուսումնարանների համար, գինն է 5 կոպ. գումարով առնողներին զիջումն կը լինի։

2. Գէորգ Բարխուդարեանի նոր թարգմանութիւնները՝ Դոն Կարլոս, Նաթան Իմաստուն և Օրլէանի Կոյս, իւրաքանչիւրը 60-ական կոպ.

3. Դոն-Քիշոտ Լամանչեցի թարգ. Յ. Առաքելեանի, գինն է 70 կոպ.

4. Լեոնի Վիշտը՝ Շահ-Ազիզեանի գինն է 1 ր. 25 կ. Ճանապարհի ծախսը գնողների վրա է։

Յանկանում են ունենալ ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ, որ պարապէր 9 տարեկան երեխայի հետ և նրան ըէալական գիմնազիայի առաջին դասատան համար պատրաստէր։ Հասցէն կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատանը։

1—2



Только что возвратившись изъ заграницы привезъ съ собою большой выборъ разныхъ карманныхъ золотыхъ и серебрянныхъ ЧАСОВЪ ремонтуаровъ различныхъ системъ, какъ-то, репитирныхъ (Rèpétition à munites) съ келендарями (à quantième) докторскіе часы (Secondes indepèndantes) и т. д. Выборъ сдѣланъ мною у лучшихъ женевскихъ фабрикъ, изъ той самой партіи которая была отправлена на Парижскую всемирную выставку; за вѣрность хода часовъ магазинъ гарантируетъ.

Большой выборъ разныхъ золотыхъ, бриліантовыхъ и серебр. вещей очень изящная работа; не смотря на курсъ, цѣны умѣренныя.

Магазинъ С. КАЦЪ.

Дворцовая улица № 3.

(332) 5—5.

ՅՈՒՆԻՍԻ 15 — ՏԵՂԵԿԱՑՈՒՅՑ — ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Յունիսի 14-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուամպերիալը)	8	30
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1310	—
Վիգրինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրինի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	67
Վենայի կուրսը ածէ 112 պլ.	121	—
Դաւրեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	8	—
» միւս տեսակը.	7	80
» չաքարաւազը .	6	—
» տրանզիտը. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երեւանու Ամերիկայի սերմից. . .	8	50
Միւս տեսակը հին սերմից.	7	50
Բուրդը թուչի . . .	8	—
» թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	40
» Երեւանի. . . .	—	—
Գարին.	—	90
Մոմը բնաճարպի (стеар.)	13	—
Մեղաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	45	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօր. . . .	27	—
» լիվանի . . .	22	—
» մարտինկօյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա.	4	
Գերմանիա . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱՐԱՐՁԱԿԱՆ ԳՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով. իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան.
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 10	

	առաւօտ.
Փոթիից . .	9. 13
Ռիոն . . .	12. 13
Միխայլովո. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

Թիֆլիսից . .	1	37
Գօրի . . .	4	8
Թիֆլիս. . .	7	56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխեթ . .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիոն. . .	9,	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացի տրակտից երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Ռուսաստանի տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիսչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս . . .	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլա աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան։

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Գավրոնսկիյ կանանց և մանկաբարձութեան 9—10 ժամ, Բակատ վենեական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Բուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բէյլա աչքերի հ. Բակատ կրծքային և ջղային հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԵՐՍԻԱՆ. Ն. Տ. Ե. խնդրում ենք միւս անգամ էլ չուղարկէք մեզ ձեր նկարագրութիւնները։ Եթէ այդ նամակը ուղարկէիք ուրիշին գուցէ նրանից աւելի ախորժ պատասխան ստանայիք։

—ԱՄԶԱՋԻՄԱՆ. Մ. Ա. Ստացանք 10 ռուբլ, կուղարկենք «Մշակ»։ Շատ ուրախ ենք, որ կաշխատակցէք, բայց յօդուածների տպելու մասին ոչինչ չենք կարող ասել մինչև նրանց չէք ուղարկի։ Ներեցէք, ժամանակ չունենք առանձին նամակ գրելու համար։

—ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Ռ. Մ. Ս. Ստացանք 3 ռուբլ։ Ձեր հարցին չենք կարող ուղիղ պատասխան տալ։ Չը գիտենք։

—ԲԱՇ-ՆՕՐԱՇԷՆ. Զ. Մ. Ն. Ստացանք 4 ռուբլ, կուղարկենք։

Дозволено Цензурою 14 Іюня Тифлисъ 1878 г. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ